

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2013 - 2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (2013 ԹՎԱԿԱՆ)

Ղեկավարվելով <<Ընտանեկան օրենսգրքի>>, <<Երեխաների իրավունքների մասին>>, <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>>, <<Սոցիալական աջակցության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին>> ՀՀ օրենքներով, ինչպես նաև վերոնշյալ օրենքներից բխող ՀՀ կառավարության համապատասխան ռազմավարական ծրագրի դրույթներով և որոշումներով, ՀՀ Կոտայքի մարզպետի հրահանգներով և հանձնարարականներով, մարզում երեխաների պաշտպանվածությանն ուղղված քաղաքականությունը և պետական ծրագրերի կատարումը ապահովելու համար իրականացրել է Կոտայքի մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանությունը, ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովումը:

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության /ԸԿԵԻՊ/ բաժինն իր աշխատանքների կազմակերպման համար առկա հիմնախնդիրների լուծման գրավական է համարել համագործակցված, գործընկերային արդյունավետ աշխատանքը երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի, ՀՀ Կոտայքի մարզի համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների, սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրակրթական դպրոցների և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ:

Հաշվետու տարում ԸԿԵԻՊ բաժնի գործառույթների իրականացման ընթացքում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հաշվառման, կարիքների գնահատման, նրանց անհատական վերականգնողական ծրագրերի մշակման, <<Մանուկ>> տեղեկատվական համակարգի փոխանցման և հաշվառումից հանման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տվյալներ	2012թ. տվյալներ	2013թ. տվյալներ	Այժմ հաշվառման մեջ են
Առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ երեխաներ	17	12	70
ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք	1	0	35
Հաշվառումից հանված ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ թվին պատկանող անձինք	21	16	-
Մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած երեխաների տվյալներ, այդ թվում՝			
հաշվառված երեխաներ	32	30	20
հաշվառումից հանված երեխաներ	41	32	
Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում, որից՝	133	124	
մանկատներում	10	6	6

հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում	107	104	104
գիշերօթիկ խնամքի հաստատություններում	16	14	76
Երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններից դուրս գրված երեխաներ, որից՝	28	15	
մանկատան սան	2	1	
գիշերօթիկ խնամքի հաստատության սան	26	14	
Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ	15	6	9
Խնամատար ընտանիքում խնամվող երեխաներ	2	2	2
Հատուկ կարիքներ ունեցող /հաշմանդամ/ երեխաների թիվը	642	582	582
Երեխա որդեգրել ցանկացող հաշվառված թեկնածուներ	9	9	9
Որդեգրման ենթակա հաշվառված երեխաներ	13	4	4

Ներկայացված թվերի վերլուծություն

ԸԿԵԻՊ բաժնի մասնագետների, խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համագործակցության արդյունքում /իրագրելու, անհատական աշխատանք/ շարունակվել է առանց ծնողական խնամքի մնացած /ԱԾԽՄ/ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող հաշվառումից դուրս մնացած երեխաների և անձանց հայտնաբերումը և հաշվառումը: Այս պահին Կոտայքի մարզի ԱԾԽՄ երեխաների և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց մարզային շտեմարաններով հաշվառված են 105 ԱԾԽՄ երեխաներ և ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձինք, որոնցից հաշվետու տարում հաշվառվել են 12-ը, սահմանված տարիքը լրանալու և այլ /մահվան, կենսաբանական ընտանիք վերադառնալու/ պատճառով հաշվառումից հանվել են 16-ը: Համապատասխան շտեմարանում այժմ առկա են 70 ծնողագուրկ երեխաների և 35 ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող անձանց տվյալներ: ԱԾԽՄ 2 երեխաներ Աբովյան համայնքում խնամվում են խնամատար ընտանիքում:

Մարզի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների շտեմարանում ուստիկանության ԱԳ բաժանմունքներից ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում հաշվառվել են 30 անչափահաս, հաշվառումից հանվել՝ 32-ը: Այս պահին հաշվառման մեջ են գտնվում 20 իրավախախտ անչափահասներ: Ուստիկանության անչափահասների գործերով զբաղվող բաժանմունքների հետ համատեղ իրականացվել են անչափահասների կողմնորոշման, տեղավորման և մուրացկանության, թափառաշրջիկության, իրավախախտության, հանցագործության միտվածության կանխարգելման աշխատանքներ, արդյունքում 2012թ. համեմատությամբ 10%-ով կամ 2-ով նվազել է հաշվառված իրավախախտ երեխաների թիվը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատուն է տեղավորվել 6 երեխա, բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա մանկատնից կենսաբանական ընտանիք է վերադարձվել 1 երեխա:

Արդյունավետ աշխատանք է տարվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հայտնաբերման, կրթության իրավունքի վերականգնման և հատուկ կարիքի գնահատման առումով: Այժմ վկայագրված են մարզի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 509 երեխաներ, նրանցից 98-ը վկայագրվել են 2013թ.-ի ընթացքում, այդ թվում, համաձայն վկայագրման կարգի, 30 երեխաներ վկայագրվել են երկրորդ և 8 երեխաներ՝ երրորդ անգամ:

Համագործակցելով երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների մասնագետների հետ՝ մարզում իրականացվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալական կարիքների գնահատման, երեխաների սոցիալ-հոգեբանական անհատական վերականգնողական ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներ: 2013թ. <<Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն>> ՊՈԱԿ են տեղավորվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալապես անապահով ընտանիքների 14 երեխաներ, որոնց կարիքի գնահատման նպատակով կատարվել են տունայցեր, բաժնի կողմից տրվել համապատասխան եզրակացություններ և խնամքի կենտրոնում կարիքի գնահատման հիման վրա կազմվել են սոցիալ-հոգեբանական վերականգնողական անհատական ծրագրեր, և 14 երեխաներ բաժնի կողմից տրված եզրակացությունների հիման վրա դուրս են գրվել հաստատություններից: Այժմ աշխատանք է տարվում բեռնաթափման ծրագրի շրջանակներում անհատական վերականգնողական ծրագրերի իրականացման միջոցով ապահովել բեռնաթափման ծրագրի շարունակականությունը:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման <<Մանուկ>> տեղեկատվական համակարգ 2011-2013թթ. ընթացքում մուտքագրվել է 439 երեխաների և երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների տվյալներ, որից 113-ը այս տարվա ընթացքում:

Ստացված նախնական տվյալներով /13.12.2013թ./ նպաստառու հաշմանդամ 63 երեխաներ հաշվառվել են 2013թ. ընթացքում, 18 տարին լրանալու պատճառով հաշվառումից հանվել են 55 երեխաների տվյալներ, այժմ հաշվառման մեջ են ընդամենը 582 երեխաներ:

Համաձայն ՀՀ կառավարության <<Երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին>> 18 մարտի 2010թ. թիվ 269-Ն որոշման՝ Կոտայքի մարզում բնակվող 7 դիմումատու քաղաքացիներ հաշվառվել են՝ որպես երեխա որդեգրել ցանկացող թեկնածուներ: Կատարվել են տունայցեր կենսապայմանների ուսումնասիրման նպատակով, կազմվել համապատասխան ակտեր, որոնց հիման վրա բաժնի կողմից տրվել են դրական եզրակացություններ: Հաշվետու ժամանակահատվածում հաշվառվել են որդեգրման ենթակա 4 երեխաներ:

Հաշվետու տարում հաշվառման մեջ գտնվող 13 հանրակրթությունից դուրս մնացած երեխաներից 6-ը հաշվառվել են այս տարի: Ուսումնասիրությունների, ԽՀՀ-ի հետ քննարկումների և ուստիկանության աջակցությամբ նրանցից 4-ը այժմ հաճախում են դպրոց, սակայն դեռևս 9 երեխաներ նույն դասարանում մնալու, ծնողների տարաբնույթ պատճառաբանությունների, առողջական խնդիրներ ունենալու պատճառով չեն հաճախում դպրոց: Այժմ ուստիկանության ԱԳ բաժանմունքների մասնագետների հետ աշխատանք է տարվում մնացած 9 երեխաների կրթական իրավունքի վերականգնման համար:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրված դրական փոփոխություններ կարելի է համարել՝

➤ երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված միասնական համակարգի, համագործակցող կողմերի՝ համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների, ուստիկանության անչափահասների գործերով ծառայությունների, հասարակական կազմակերպությունների, հանրակրթական դպրոցների և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների հետ տարվող աշխատանքների մշտական կատարելագործումը:

➤ ԽՀՀ հանձնաժողովների աշխատանքային գործունեության մոնիթորինգի անցկացումը 21 համայնքներում:

➤ գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի անդամների մասնագիտական վերապատրաստումների անցկացումը:

Երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում առկա են հետևյալ հիմնախնդիրները, որոնք համակարգային են և խոչընդոտում են ոլորտում առկա աշխատանքների լիարժեք և արդյունավետ իրականացմանը.

➤ հատուկ կարիքներ ունեցող (հաշմանդամ) երեխաների վերականգնողական կենտրոնների բացակայությունը,

➤ խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման շարունակականության ապահովման ռեսուրսների բացակայությունը: Ռեսուրսների առկայությունը կնպաստի ԱԾԽՄ երեխաների կյանքի

որակի լավացմանը, ընտանիքում խնամվելու և դաստիարակվելու հնարավորությունների ստեղծմանը, հաստատություններ երեխաների մուտքի նվազեցմանը և բեռնաթափմանը:

➤ մարզի համայնքներում խնամքի ցերեկային կենտրոնների բացակայությունը,

➤ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներում հոգեբանների, սոցիալական աշխատողների և սոցիալական մանկավարժների սակավությունը, մասնագիտական վերապատրաստումների համար միջոցների բացակայությունը,

➤ մարզում ընտանիքներին հոգեբանական ծառայություններ մատուցող կենտրոնների բացակայությունը, որը ազդում է համայնքների կարողություններին և ենթակա է հզորացման: Համայնքային ցերեկային կենտրոնի ստեղծումը, որի միջոցով կիրականացվի նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների սոցիալական ծառայությունների տրամադրում, ծառայությունների ծավալի մեծացում, մատչելիության բարելավում՝ զգալիորեն կնպաստի մարզի համայնքների կարողությունների բարձրացմանը:

➤ բռնության ենթարկված կանանց և երեխաների համար նախատեսված ապաստարանի բացակայությունը:

ՀՀ Կոտայքի մարզպետի կողմից հաստատված 2013թ. աշխատանքային ծրագիրը իրականացվել է ամբողջությամբ. աշխատանքային ծրագրով նախատեսված մարզխորհրդում բարձրացված, մարզպետի մոտ և տարածքային խորհրդակցություններում համայնքների ղեկավարների հետ քննարկված հարցերի վերաբերյալ Կոտայքի մարզպետի կողմից տրված հանձնարարականները ևս կատարվել են, իսկ մի շարք շարունակականություն պահանջող հարցեր և հանձնարարականներ գտնվում են բաժնի մասնագետների մշտական ուշադրության կենտրոնում:

09.01.2014թ.